ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՄԱՅԻՍԻ 28-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Մկրտչյանը։ Սուրբ պատարագին ներկա էին մեծ թվով սփյուռքահայ ուխտավորներ, որոնք պատարագի վերջում հաղորդվեցին։

***

ՄԱՅԻՍԻ 29-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «տօն սրբոց կուսանացն Հռիփսիմեանց»։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը։

***

ՄԱՅԻՍԻ 30-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, «տօն սրբոց կուսանացն Գայիանեանց»։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։

***

ՄԱՅԻՍԻ 31-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Վեհարանի դահլիճում տեղի ունեցավ Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի նիստ, նախագահությամբ Վեհափառ Հայրապետի։ Ժողովում քննարկվեց Վեհարանի նոր շենքում և այլ վայրերում կատարվող շինարարական աշխատանքների ընթացքը։

***

ՀՈՒՆԻՍԻ 1-ԻՆ, ՀԱՆԳՇԱԲԹԻ, «տօն Սրբոյն Յովհաննու կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին» և «տօն Շողակաթի»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Հարություն վարդապետ Մատենչյանը։

***

ՀՈՒՆԻՍԻ 1-ԻՆ, ՀԱՆԳՇԱԲԹԻ, Մայր Աթոռի հարավային կողմում, Ղազարապատի նոր խաղադաշտում տեղի ունեցավ Հոգևոր Ճեմարանի ուսանողության առաջին մարզահանդեսը, բարձր նախագահությամբ Վեհափառ Հայրապետի։ Ուսանողների հանդիսավոր և ռիթմիկ տողանցքից հետո, պաշտոնապես բարձրացվեց մարզահանդեսի դրոշը։ Ապա մարզիչ Հարություն Սիմոնյանը մարզահանդեսը հայտարարեց բացված։ Տեղի ունեցան շվեդական մարզանքներ, վոլեյբոլի և բասկետբոլի մրցումներ, բարձրության և երկարության ցատկումներ և ապա պարանաձգություն։ Մրցող ուսանողները երկու խմբի էին բաժանվել՝ «Արագած» և «Նաիրի»։ Մարզահանդեսում հաղթանակը շահեցին «Արագած»-ի տղաները։

Որպես օրվա մրցումների հաղթականներ, մրցանակների արժանացան Հակոբ սարկավագ Գարաջյանը, Հովհաննես Աշճյանը, Հովսեփ Ավետիսյանը և Հովհաննես Մելիտոնյանը։

Ջերմ մթնոլորտի մեջ, Վեհափառ Հայրապետի փակման խոսքով ու «Պահպանիչ»-ով ավարտվեց մարզահանդեսը։

***

ՀՈՒՆԻՍԻ 3-ԻՆ, ՇԱԲԱԹ, «տօն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելից ի վիրապէն»։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։

***

ՀՈՒՆԻՍԻ 5-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, հետմիջօրեի ժամը 3-ին, վանական սեղանատանը ճաշկերույթ տրվեց նորընծա չորս աբեղաների ձեռնադրության ուրախ առիթով։ Ընդունելությանը ներկա էին Մայր Աթոռի ամբողջ միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը և վանքի պաշտոնեությունը։

Նորընծաներին շնորհավորեցին և բարեմաղթություններ արեցին նրանց ապագա արդյունավետ գործունեության համար գերաշնորհ Տ. Սահակ, Տ. Եզնիկ և Տ. Վարդան սրբազանները։

Նորընծաներին շնորհավորեցին նաև դասախոսներ Արթուն Հատիտյանը, Պարգև Շահբազյանը, Եղիշե Վարդերեսյանը, Գրի-

գոր Գյուլյանը, Սարգիս Կոնսուլյանը և Սամվել Անթոսյանը։

Հոգևոր Ճեմարանի ընծայարանի անունից նորընծա աբեղաներին շնորհավորեցին նաև բարեշնորհ Անաստաս սարկավագ Մովսիսյանը և Ա. լսարանի ուսանող Վռամշապուհ Ջիհանյանը։

Հանուն նորընծաների, շնորհակալության և երախտագիտության ջերմ խոսք ասաց Տ. Գրիգոր աբեղա Եղիայանը, խոստանալով Աստուծո օգնականությամբ և Վեհափառ Հայրապետի օգնությամբ արդարացնել այն վստահությունը, որը ցույց տրվեց Վեհափառ Հայրապետի կողմից, սրտագին նվիրումով ծառայելով մեր Ս. Եկեղեցուն, Հայրենիքին և ժողովրդին։

Ընդունելությունը վերջացավ խմբովին երգված Տերունական աղոթքով։

***

ՀՈՒՆԻՍԻ 9-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Մայր Աթոռ վերադարձան Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը և դիվանապետ Հ. Առաքելյանը, որոնք Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ այցելել էին Հնդկաստան և Լիբանան՝ ազգային-եկեղեցական գործերով։

***

ՀՈՒՆԻՍԻ 11-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանը։

***

ՀՈՒՆԻՍԻ 17-ԻՆ, ՇԱԲԱԹ, «գիւտ նշխարաց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին»։ Օրվա տոնի առթիվ Իշման Ս. Սեղանի վրա պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Մկրտչյանը։ Պատարագը երգվեց Հոգևոր Ճեմարանի ուսանողների կողմից։

***

ՀՈՒՆԻՍԻ 18-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Մկրտչյանը։ Պատարագին ներկա էին սիյուռքահայ ուխտավորներ։

***

ՀՈՒՆԻՍԻ 21-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, թեմական գործերով Մայր Աթոռ ժամանեց Վրաստանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը։

***

ՀՈՒՆԻՍԻ 22-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, «տօն Սրբոց Թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրովբայ»։ Սուրբ պատարագը մատուցվեց Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցում։ Թարգմանիչ մեծ վարդապետի կյանքի և գործունեության մասին քարոզեց բարձրաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, «նմանեալ Մովսիսի տեարք վարդապետք, բերելով զգիր օրինաց ի Հայաստան աշխարհ» բնաբանով։

Հավարտ սուրբ պատարագի, հոգեհանգստյան մասնավոր պաշտոն կատարվեց եկեղեցու շրջափակում գտնվող իշխան Վահան Ամատունու գերեզմանի վրա։

***

ՀՈՒՆԻՍԻ 24-ԻՆ, ՇԱԲԱԹ, Մայր Աթոռ այցելեցին հյուրաբար Երևանում գտնվող գրագետ Կոստան Զարյանը և դուստրը՝ քանդակագործ Նվարդ Զարյանը։ Հյուրերը Մայր Տաճարում իրենց ուխտը կատարելուց հետո, Վեհարանում ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից։

***

ՀՈՒՆԻՍԻ 24-ԻՆ, ՇԱԲԱԹ, Հոգևոր Ճեմարանի հանդիսասրահում, հունիսի 13—18-ին Պրագայում կայացած համաքրիստոնեական համաշխարհային կոնգրեսի պատմական նշանակության մասին Ճեմարանի ուսանողության, Մայր Աթոռի միաբանության և վանքի պաշտոնեության զեկուցեց Հայ Եկեղեցու պատվիրակության անդամ և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը, պատմելով իր հուշերն ու տպավորությունները։

Բանախոսության վերջում վերատեսուչ սրբազան հայրը շնորհակալություն հայտնեց հարգելի բանախոսին նրա շահեկան դասախոսության համար։

***

ՀՈՒՆԻՍԻ 25-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «գիւտ տփոյ Սրբուհւոյ Աստուածածնի»։ Մայր Տաճարում պատարագեց Ամերիկայի Միացյալ Նահանգների Դիտրոյտ քաղաքից ուխտավորաբար Մայր Աթոռ այցելած արժանապատիվ Տ. Տիրան քահանա Փափազյանը և իր բովանդակալից քարոզի մեջ ծանրացավ Ս. Էջմիածնի դերի մասին հայ ժողովրդի կյանքում, մշակույթի ստեղծման, զարգացման և պահպանման աշխատանքների մեջ։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Սուրբ պատարագին ներկա էին նաև բազմաթիվ ամերիկահայ ուխտավորներ։

Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգստյան կարգ վասն հոգվույն Կոստանդնուպոլսի նորոգ հանգուցյալ պատ-

րիարք Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանի։

***

ՀՈՒՆԻՍԻ 28-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Հոգևոր ճեմարանի ուսուցչական կազմը և ուսանողությունը, վերատեսուչ սրբազանի գլխավորությամբ, եռօրյա զբոսարշավի գնացին դեպի Հաղարծին վանքը։

Ամսի 30-ին ուսանողությունը Մայր Աթոռ վերադարձավ ուրախ և կազդուրված։

Այնուհետև ուսանողության տրվեց ամառային մեծ արձակուրդ։

Ուսանողների մի մասը արձակուրդի օրերին կպաշտոնավարի Մայր Աթոռում և թեմերի եկեղեցիներում։

***

ՀՈՒՆԻՍԻ 29-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, թեմական գործերով Մայր Աթոռ ժամանեց Շիրակի թեմի առաջնորդ հոգեշնորհ Տ. Մաշտոց վարդապետ Թաշիրյանը։

Վեհափառ Հայրապետը բարեհաճեց նույն օրը ընդունել Շիրակի թեմի առաջնորդին և զրույց ունեցավ նրա հետ թեմական գործերի մասին։

***

ՀՈՒԼԻՍԻ 3-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Ազգիս Վեհափառ Հայրապետը, Կոստանդնուպոլիս ուղևորվելու համար, առավոտյան ժամը 9-ին «Իլ—18» ինքնաթիռով մեկնեց Մոսկվա։

Կոստանդնուպոլսում Վեհափառ Հայրապետը կնախագահի Թուրքիո հայոց նորոգ. հանգուցյալ պատրիարք երջանկահիշատակ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանի թաղման։

Այս տխուր առիթով Նորին Ս. Օծության ուղեկցում են Վրաստանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը և Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Պարգև վարդապետ Գևորգյանը։